07.04.2017թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ- ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ և ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան տիկնայք, մայրեր և քույրեր

Ընդունեք ապրիլյոթյան շնորհավորանքներս Մայրության և գեղեցկության օրվա առթիվ:

Հայ առաքելական եկեղեցու հիմնական տոներից մեկը՝ Սուրբ Աստվածածնի ավետման օրը, ստացել է նաև աշխարհիկ հնչեղություն՝ դառնալով հայկական տոնացույցի ամենագեղեցիկ և սպասված օրերից մեկը:

Անթաքույց հպարտությամբ փաստում ենք, որ մեր մեր կողքին ապրում են հոգատար և նվիրյալ մայրեր, ովքեր միաժամանակ արարող և ստեղծագործող , ոգևորող ու ոգեշնչող կանայք են, հմուտ և բանիմաց մասնագետներ, օջախին շունչ տվող պատվախնդիր տանտիկիններ, հասարակական ու քաղաքական գործիչներ:

Տոնական այսօրն էլ ևս մեկ պատեհ առիթ է՝ մայրերին հայտնելու մեր սերն ու երախտագիտությունը, կրկին ասելու, որ ազգապահպանման, ձեր զավակների դաստիարակման ու կրթման գործում դուք ամուր և հուսալի այուներ եք, օջախներին շունչ տվող պահապաններ:

Կնոջ ամենամեծ ու ամենավեհ առաքելությունը մայրությունն է, որը նաև գեղեցկության խորհրդանիշն է: Մեր մայրերի փխրուն ուսերին դրված է մեծագույն պատասխանատվություն, որը կրում են պատվախնդրորեն և մեծ սիրով:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Հայոց և Արցախյան սահմաններն անառիկ պահող մեր զինվորների մայրերին: Հայրենիքի պաշտպաններ ծնած հայոց մայրերին մաղթում եմ անսահման տոկունություն, ոգու կորով, համբերություն և հոգեկան հանգստություն:

Ապրիլի 7-ով ամփոփվում է նաև կանանց միամսյակը, սակայն կնոջ և մոր նկատմամբ հոգատար վերաբերմունքը պետք է լինի մշտական, ուշադրությունը՝ ամենօրյա, որոնց վավերագրերն են պետական ու համայնքային նախաձեռնություններն ու ծրագրերը:

Սիրելի մայրեր ու քույրեր, կանայք և աղջիկներ

Հրաշալի տոնի՝ Մայրության և գեղեցկության օրվա առթիվ ընդունեք իմ, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները: Գարնանաբույր տոնը թող պարգևի լույս ու ժպիտ, անսպառ ջերմություն և լավատեսություն:

Տոնական այս պահին ցանկանում եմ ձեզ բարձր տրամադրություն, գնահատված ու սիրված լինելու մեծագույն բերկրանք, երջանկություն:

Մաղթում եմ ձեզ արևշատություն, առողջություն, խաղաղ ու բարեկեցիկ կյանք: